Սովորութիւն է ունեցել Աբովեանի պապը, նաեւ ընդհանուր հացկերոյթ տալու բոլոր միաբաններին: Վանքում երկու-երեք օր մնալուց յետոյ՝ նա տուն է վերադարձել միշտ:

Հաքստհաուզէն աւելացնում է.

«Աբովեանի ծնողները այլեւս այնքան հարուստ չէին, որ ի վիճակի լինէին այդչափ առատօրէն նուէրներ տանելու վանք: Բայց եւ այնպէս նրանք էլ տարեկան մի անգամ էջմիածին ուխտի են գնում, զոհանալով միայն ընդհանուր հացկերոյթ տալով»:

Աբովեանի տոհմի, մեծ հօր եւ ծնողների մասին Հաքստհաուզէնի մօտ ցրուած տեղեկութիւնները ամփոփելուց յետոյ՝ անցնինք իր՝ Աբովեանի անձնաւորութեան:

* * *

Աբովեանի ուսման եւ կրթութեան մասին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում Հաքստհաուզէն (Ա. 209):

«Իմ բարեկամ Աբովեանի ծնողները որոշել էին՝ իրենց որդուն հոգեւոր կոչման նուիրել: Տասը տարեկան հասակում կրթութեան նպատակով նրան հայրը էջմիածին է տանում եւ ներկայացնում ծերունի Ղուկաս կաթողիկոսին: Կաթողիկոսը ասում է Աբովեանի հօրը. «Քո հայրը մի առաքինի մարդ էր. ես եւ իմ վանքը շատ բան ենք պարտական նրան իր բարի գործերի համար: Քո հանգուցեալ հայրը քրիստոնէական մտքի եւ գործի տիպար էր. անգամ մեր վերջին վանականը նրանից լաւ բան է տեսել: Այդ պատճառով էլ ուրախութիւն է մեզ՝ քո ընտանիքին մի փոքրիկ ծառայութիւն մատուցել՝ ընդունելով այս տղային»: Ապա կաթողիկոսը օրհնում է փոքրիկ Խաչատուրին եւ ասում. «Մի՛ տխրիր, զաւակս, որ հայրդ հիմա գնալու է, որ այսուհետեւ մայրդ քեզնից հեռու պիտի լինի: Ես կը լինիմ քեզ հայր: Ե՛կ մօտս, գրկիր ինձ եւ համբուրի՛ր ձեռքս»:

Աբովեան էջմիածին էր տարուել ուրեմն, հոգեւոր կոչման համար պատրաստուելու նպատակով: Նրա էջմիածնական կեանքի մասին, երբ այնտեղ է դալիս Պարրոտ, Հաքստհաուզէն հաղորդում է մեզ նաեւ հետեւեալը.—

«Պատանի հասակից Աբովեանը կաթողիկոսին մօտ էր, որ հայերի աչքում սուրբի հրոչակ ունի եւ աւելի յարգանք է վայելում, քան ոեւէ աշխարհիկ իշխան: Այս պատճառով ահա՝ Աբովեանի դիրքն էլ լաւ էր, նախանձելի: Եւ սակայն նրա հոգին ձգտում էր դէպի բարձրը: Եւ երբ նա ուղեւոր Պարրոտի հետ ծանօթացաւ, յանկարծակի, որպէս մի կայծակ փայլատակեց նրա մէջ այն միտքը, թէ կենսական պահանջ է նրա համար եւրոպական կրթութիւն առնելը: Ու նա վճռեց Պարրոտին ուղեկցել դէպի Եւրոպա:

Բայց ահա բարձրանում են ամէն կարգի արգելքներ, Աբովեանի մերձաւորները չեն ուզում, որ նա այդչափ հեռու երկիրներ երթայ, իսկ ամենից առաջ՝ հոգեւորականութիւնը երկիւղ ունէր, որ չլինի՞ թէ նա անհաւատարմութիւն ցոյց տայ իր կրօնին:

Վերջապէս Աբովեան յաղթահարեց ամէն ինչի, մանաւանդ որ Եփրեմ կաթողիկոսն էլ տուաւ իր համաձայնութիւնը: Եւ երբ Աբովեան ծունկ չոքեց նրա առաջ եւ լալով երեսը ծածկեց կաթողիկոսի գրկում, այսպէս խօսեց պատկառելի ծերունին.

«Որդի՛ս, հոգեւոր զաւակս: Եթէ դու դառնաս ուրացող, մոռանաս քո մայր-եկեղեցին եւ հոգեւոր հօրդ, որ ահա ես եմ, մոռանաս ծնողներիդ ու հայրենիքդ ու թողնես հաւատդ, ապա ուրեմն գիտցիր հաստատապէս, որ Աստուած մի կտոր չոր հացից անգամ կը զրկի քեզ: Իսկ եթէ, բան է, դու մեզնից հեռանալ ես ուզում, որովհետեւ ինքզինքդ վիրաւորուած ես զգում, ապա ուրեմն ասա՛ ինձ, ամէն ինչ կը չտկեմ: Ես քո հանդէպ ցոյց եմ տուել Տովբիասի հայրական բարութիւնը, իսկ դու էլ ինձ համար եղել ես մի այնպիսի զաւակ, ինչպէս՝ նրանը: Բայց դու ուզում ես մեզ թողնել :Քո երիտասարդ հասակը քեզ դրան է մղում: Դու ասում ես, որ հայրենիքիդ սիրու համար ես գնում: Ուրեմն թող լինի՛ այնպէս, ինչպէս ինքդ ես ուզում: Բան է, եթէ օտար աշխարհում ցաւ ու վիշտ տեսնելու լինիս, պիտի պարտաւորուիս՝ հլութեամբ տանելու — այդ ամէնը, ոչ Աստծուն, ոչ էլ մեզ պիտի մեղադրես: Եթէ, ինչպէս ասում ես, չմոռանաս հայրենիքդ ու կրօնդ եւ վարուիս այնպէս, ինչպէս խոստանում ես, վերադարձիդ դու նորէն մեր սիրելին ես, ինչպէս որ եղել ես մինչեւ այժմ: Թերեւս դու ինձ մեռած գտնես. այն ժամանակ օրհնիր իմ գերեզմանը: Իմ աճիւնը